**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ**

**«Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի (ՎԶՄԲ 8055**-AM)
2014**թ. դեկտեմբերի 31-ով ավարտված տարվա և «Էլեկտրահաղորդման ցանցի բարելում ծրագրի նախապատրաստման դրամաշնորհի» ծրագրի** (TF016604) **2014թ. հուլիսի 4-ից 2015 մարտի 15-ը ընկած ժամանակահատվածի (ներառյալ արտոնյալ ժամանակահատվածը) աուդիտի իրականացման**

15 հունվար, 2015թ.

**Ծրագրերի անունը: «Էլեկտրամատակարարման հուսալիության»**, **«Էլեկտրահաղորդման ցանցի բարելում ծրագրի նախապատրաստման դրամաշնորհի» Խորհրդատվական ծառայություն. Նվազագույն գնի վրա հիմնված ընտրություն**
**ՎԶՄԲ վարկ №**-8055-AM; **ՎԶՄԲ դրամաշնորհի №**TF016604
**Ծրագիր** No P116748, No P 146199

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է վարկ «Էլեկտրա մատակարարման հուսալիություն» ծրագիրը ֆինանսավորելու նպատակով և դրամաշնորհ «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիրը նախապատրաստելու նպատակով, և նախատեսում է գումարների մի մասն օգտագործել «**Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի (ՎԶՄԲ 8055**-AM) **2014թ. դեկտեմբերի 31-ով ավարտված տարվա, և «Էլեկտրահաղորդման ցանցի բարելում ծրագրի նախապատրաստման դրամաշնորհի» ծրագրի** (TF016604) **2014թ. հուլիսի 4-ից 2015 մարտի 15-ը ընկած ժամանակահատվածի (ներառյալ արտոնյալ ժամանակահատվածը) աուդիտ**» ծառայությունների ձեռք բերելու համար:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք հայտնելու Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի (ՄՀՍԽ) կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՄՖՀՍ) հիման վրա կազմված՝ «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի (ՎԶՄԲ 8055-AM) 2014թ. դեկտեմբերի 31-ով ավարտված տարվա, և «Էլեկտրահաղորդման ցանցի բարելում ծրագրի նախապատրաստման դրամաշնորհի» ծրագրի (TF016604) 2014թ. հուլիսի 4-ից 2015 մարտի 15-ը ընկած ժամանակահատվածի (ներառյալ արտոնյալ ժամանակահատվածը) ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Ծրագրի հաշիվների մատյանը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքն է և այն կազմվում է ծրագրի հետ կապված ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝

ա) Ստացված գումարների ամփոփագիր՝ առանձնացված ձևով ներկայացնելով Համաշխարհային բանկից, ծրագրի շրջանակում այլ դոնորներից ստացված և պետական համաֆինանսավորման գումարները:
բ) Ծրագրի հիմնական բաղադրիչների և ծախսային կատեգորիաների մասով ծախսերի ամփոփագիր ընթացիկ տարվա և մինչ նշված ժամանակահատվածը կատարված ծախսերի մասով:
գ) Գումարների ստացման հայտերի ներկայացման համար օգտագործված ամփոփ հաշվետվությունների կամ ծախսային հաշվետվությունների ամփոփագիր:
դ) Նպատակային հաշվի քաղվածքներ:

ե) Ծրագրի կուտակված գումարները, բանկային մնացորդները և ծրագրի մյուս ակտիվներն ու պարտավորություններն, եթե այդպիսին գոյություն ունեն, արտացոլող հաշվապահական հաշվեկշիռ:
զ) Հաշվապահական քաղաքականության կարևոր դրույթները նկարագրող և այլ բացատրական տեղեկատվություն պարունակող ծանոթագրություններ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն սույնով հրավիրում է իրավասու աուդիտորական կազմակերպություններին (որոնք ներառված են Համաշխարհային Բանկի առ 25 օգոստոսի 2014թ. Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի համար իրավասու Աուդիտորական Կազմակերպությունների ցանկում) ներկայացնելու ծառայությունների տրամադրման համար հետաքրքրության հայտ: Հետաքրքրված աուդիտորները պետք է ներկայացնեն համապատասխան որակավորումը հավաստող տեղեկատվությունը (Աուդիտորական կազմակերպության մասին գրքույկներ, Միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներքո կատարված նմանատիպ աշխատանքների նկարագրությունը, նմանատիպ այլ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն):

Կարճ ցանկի կազմման չափանիշներն են՝

- Կազմակերպության ընդհանուր փորձը /առավելագույնը 30 միավոր/
- Կազմակերպության փորձը ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող նմանատիպ ծրագրերում / առավելագույնը 70 միավոր /

Աուդիտորական կազմակերպությունն ընտրվելու է Համաշխարհային բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով սահմանված «Նվազագույն գնի վրա հիմնված ընտրության» մեթոդի համաձայն:

Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ աշխատանքային օրերին ժամը 09.00-17.30, զանգահարելով +374 10-72-02-70: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2015թ. հունվարի 29-ը՝ ժամը 15.00:


«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ<br>
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0084,<br>
Զորավար Անդրանիկի 1,<br>
պարոն Արամ Անանյան<br>
Հեռ: +37410-720010; Ֆաքս: +37410-720121;<br>
էլ.հասցե hvenprojects@gmail.com;